

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9

ԵՊՀ-ի Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի 2024 թվականի
փետրվարի 12-ին կայացած Գիտական Խորհրդի N 9 նիստի

Նախագահ – Ս.Ս.Քելյան

Քարտուղար – Ե.Ս.Մանուկյան

Ներկա էին՝ 32 անդամներից 28-ը (ցուցակը կցվում է)

Խորհրդի նախագահ Ս.Ս.Քելյանը հայտարարեց քվեակազմի առկայության մասին և
քվեարկության դրեց նիստի օրակարգը:

Օրակարգ

1. Անվանական կրթաթոշակ ստանալու թեկնածուների առաջադրում

/գեկ.մանդ.հանձ.նախ.Վ.Պ.Վարդանյան/

2. Ընթացիկ հարցեր

Օրակարգը հաստատելուց հետո

1.

1.1 ԼՍԵՅԻՆ. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի մանդատային հանձնաժողովի նախագահ պրոֆ. Վ.Պ.Վարդանյանի հաղորդումը «**Ղևոնդ Ալիշան**»-ի անվան կրթաթոշակ նշանակելու վերաբերյալ: Նա մանրամասնորեն ներկայացրեց անվանական կրթաթոշակի հավակնելու կանոնակարգը, ինչպես նաև առաջադրված թեկնածուների՝ Աշխարհագրության բաժնի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողներ **Մարիամ Վարդանի Թովմասյանի** և **Կարինե Գեղամի Երանյանի** ներկայացրած փաստաթղթերը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ. Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի
դոց.Ա.Հ.Պոտոսյանը, ֆիզիկական աշխարհագրության և

ջրաօդերևութաբանության ամբիոնի դոց.Վ.Գ.Մարգարյանը, Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի վարիչի ժ/պ Ա.Ս.Փիլոյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Բաց քվեարկության արդյունքներով ԿՈՂՄ՝ 16, ԴԵՄ՝ 7, ՁԵՌՆՊԱՀ՝5 Աշխարհագրության բաժնի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող **Կարինե Գեղամի Երանյանին** երաշխավորել **«Ղևոնդ Ալիշան»**-ի անվան կրթաթոշակ հատկացնելու:

1.2 ԼՍԵՑԻՆ. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի մանդատային հանձնաժողովի նախագահ պրոֆ.Վ.Պ.Վարդանյանի հաղորդումը **«Տիգրան Ջրբաշյան»**-ի անվան կրթաթոշակ նշանակելու վերաբերյալ: Նա մանրամասնորեն ներկայացրեց անվանական կրթաթոշակի հավակնելու կանոնակարգը, ինչպես նաև առաջադրված թեկնածու՝ Երկրաբանության բաժնի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանող **Անժելա Սարգսի Բաղդասարյանի** ներկայացրած փաստաթղթերը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Բաց քվեարկության արդյունքներով՝ ԿՈՂՄ՝ 28, ԴԵՄ՝ 0, ՁԵՌՆՊԱՀ՝0, Երկրաբանության բաժնի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանող **Անժելա Սարգսի Բաղդասարյանին** երաշխավորել **«Տիգրան Ջրբաշյան»**-ի անվան կրթաթոշակ հատկացնելու:

1.3 ԼՍԵՑԻՆ. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի մանդատային հանձնաժողովի նախագահ պրոֆ. Վ.Պ.Վարդանյանի հաղորդումը **«Գեորգի Տեր-Ստեփանյան»**-ի անվան կրթաթոշակ նշանակելու վերաբերյալ: Նա մանրամասնորեն ներկայացրեց անվանական կրթաթոշակի հավակնելու կանոնակարգը, ինչպես նաև առաջադրված թեկնածու՝ **«Երկրաբանություն»** մասնագիտության մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանող **Մերի Վարդանի Համբարձումյանի** ներկայացրած փաստաթղթերը, ով դիմել է **«Բնապահպանություն»** ուղղվածության մրցութին մասնակցելու:

ՈՐՈՇԵՑԻՆ. Բաց քվեարկության արդյունքներով ԿՈՂՄ՝ 28, ԴԵՄ՝ 0, ՁԵՌՆՊԱՀ՝0 **«Երկրաբանություն»** մասնագիտության մագիստրատուրայի 1-ին կուրսի

ուսանող Մերի Վարդանի Համբարձումյանին երաշխավորել «Բնապահպանություն» ուղղվածության «Գեորգի Տեր-Ստեփանյան»-ի անվան կրթաթոշակ հատկացնելու:

1.4 ԼՍԵՑԻՆ. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի մանդատային հանձնաժողովի նախագահ պրոֆ. Վ.Պ.Վարդայանի հաղորդումը «Գեորգի Տեր-Ստեփանյան»-ի անվան կրթաթոշակ նշանակելու վերաբերյալ: Նա մանրամասնորեն ներկայացրեց անվանական կրթաթոշակի հավակնելու կանոնակարգը, ինչպես նաև առաջադրված թեկնածու՝ «Երկրաբանություն» մասնագիտության «Երկրաֆիզիկա, ճարտարագիտական երկրաբանություն և ջրաերկրաբանություն» կրթական ծրագրի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող Մարինա Արթուրի Բանգոյանի ներկայացրած փաստաթղթերը, ով դիմել է «Սողանքագիտություն և ինժեներային երկրաբանություն» ուղղվածության մրցույթին մասնակցելու:

ՈՐՈՇԵՑԻՆ. Բաց քվեարկության արդյունքներով ԿՈՂՄ՝ 28, ԴԵՄ՝ 0, ՁԵՌՆՊԱՀ՝ 0 «Երկրաբանություն» մասնագիտության մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող Մարինա Արթուրի Բանգոյանին երաշխավորել «Սողանքագիտություն և ինժեներային երկրաբանություն» ուղղվածության «Գեորգի Տեր-Ստեփանյան»-ի անվան կրթաթոշակ հատկացնելու:

2. ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՅԵՐ

2.1 ԼՍԵՑԻՆ. Ֆակուլտետի դեկան Ս.Ս.Քելյանի հաղորդումը 2023/2024 ուստարվա երկրորդ կիսամյակում ուսանողների հաճախումների վերաբերյալ: Ս.Քելյանը մասնավորապես նշեց, որ դեկանի, ֆակուլտետի գրասենյակի ղեկավար-տեղակալի և գրասենյակի աշխատակիցների կողմից, կիսամյակի սկսվելուն գուզրնթաց, ուշադրության կենտրոնում են պահվելու դասի չներկայացող ուսանողները, հստակեցվելու են ուսանողների բացակայությունների պատճառները և ձեռնարկվելու են համապատասխան միջոցներ սովորելու ցանկություն չունեցող ուսանողներին համալսարանից ազատելու ուղղությամբ:

Խոսքի ավարտին դեկան Ս.Քելյանը կոչ արեց ամբիոնի վարիչներին համակարգել ամբիոնի դասախոսների կողմից ուսանողների բացակայությունների արձանագրումն ու ֆիքսումը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ընդունել ի գիտություն:

2.2 ԼՍԵՑԻՆ. Ֆակուլտետի դեկան Ս.Ս.Քելյանի հաղորդումը մատյանների լրացման գործընթացի վերաբերյալ: Ս.Քելյանը մասնավորապես նշեց, որ մատյանների լրացումը, դասապրոցեսին ուսանողների ներկայությունը/բացակայությունը պետք է արձանագրվի միայն դասը վարող դասախոսի կողմից և անթույլատրելի համարեց լրացման կարգավորումները թողնել կուրսի ավագի կամայականությանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ընդունել ի գիտություն:

Գիտական խորհրդի նախագահ՝

Ս.Ս.Քելյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

Ե.Ս.Մանուկյան